

Կ-248<sup>2</sup>-31.01.2018,19.03.2018-ՏՏԳԲ-011/2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**ՎԱՐՉԱՎԱՆ ԻՐԱՎԱՆԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆԱԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 43.1-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«Հոդված 43.1. Աղբահանության և սանիտարական մաքրման կանոնները խախտելը, չսահմանված վայրերում սպառման թափոններ թափելը**

1. Աղբահանության աշխատանքները ժամանակին չկազմակերպելը առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով.

2. սույն հոդվածով նախատեսված խախտումը վարչական տույժ նշանակելու օրվանից հետո մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով.

3. Չսահմանված ու չնախատեսված տեղերում և վայրերում՝ աղբամուղերից, աղբահավաք խցերից, աղբարկղերից, աղբամաններից կամ աղբահավաք մեքենաներից, ինչպես նաև սահմանված կարգով կազմակերպված կամ նախատեսված փոխաբեռնման կայաններից կամ աղբավայրերից դուրս՝

1) մինչև մեկ խորանարդ մետր ծավալով սպառման աղբ թափելը՝ առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի քսանապատիկից երեսնապատիկի չափով, իսկ իրավաբանական անձի նկատմամբ՝ ութսունապատիկից հարյուրապատիկի չափով.

2) մեկ խորանարդ մետրից ավելի ծավալով սպառման աղբ թափելը՝ առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից ութսունապատիկի չափով, իսկ իրավաբանական անձի նկատմամբ՝ հարյուրիհիսնապատիկից երկուհարյուրապատիկի չափով.

3) սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված արարքը կատարելը բնակելի, հասարակական կամ այլ նշանակության շենքերից կամ այլ շինություններից՝ առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից հիսնապատիկի չափով, իսկ իրավաբանական անձի նկատմամբ՝ հարյուրապատիկից հարյուրիհիսնապատիկի չափով.

4) խոշոր եզրաչափի աղբ (երկու և ավելի քառակուսի մետր զբաղեցնող խոշոր կենցաղային և ոչ կենցաղային սարքավորումներ, այդ թվում՝ տրանսպորտային միջոցի հենասարք, թափք, մետաղական ջարդոն, էլեկտրատեխնիկական սարքավորումներ կամ այլ նմանատիպ իրեր) թափելը՝ առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից հարյուրիհիսնապատիկի չափով, իսկ իրավաբանական անձի նկատմամբ՝ երեքհարյուրապատիկի չափով.

5) մարտկոցներ, էլեկտրական կուտակիչներ, էլեկտրալամպեր, էլեկտրոնային ապրանքներ, գրաֆիտային էլեկտրոդներ թափելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի քսանապատիկից երեսնապատիկի չափով.

6) մինչև 5 հատ անվադող թափելը (բացառությամբ հեծանվի դողը), առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի քսանապատիկից երեսնապատիկի չափով.

7) 5-ից ավելի անվադող թափելը (բացառությամբ հեծանվի դողը)՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով.

8) մինչև մեկ խորանարդ մետր ծավալով շինարարական աղբ թափելը՝ առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի քսանապատիկից երեսնապատիկի չափով, իսկ իրավաբանական անձի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի վաթսուհապատիկից ութսունապատիկի չափով.

9) մեկից ավելի խորանարդ մետր ծավալով շինարարական աղբ թափելը՝ առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից ութսունապատիկի չափով, իսկ իրավաբանական անձի նկատմամբ՝ երկուհարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով.

10) կենսաբանական թափոններ (կենդանական ծագման պարենային և ոչ պարենային հումքի վերամշակման արդյունքում ստացված թափոններ, ինչպես նաև անասնապահական, թռչնաբուծական և ձկնաբուծական ձեռնարկությունների գործունեության արդյունքում առաջացած թափոններ) թափելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի քսանապատիկից երեսնապատիկի չափով, իսկ իրավաբանական անձի նկատմամբ՝ հարյուրապատիկից երկուհարյուրապատիկի չափով:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված վարչական իրավախախտումները ջրային համակարգերում, այդ թվում ոռոգման ջրանցքներում, ինչպես նաև սանիտարական պահպանման գոտիներում կատարելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ տվյալ արարքի համար սույն հոդվածով նախատեսված տուգանքների չափերի կրկնապատիկի չափով:

5. Առանց թույլտվության շինարարական կամ խոշոր եզրաչափի աղբի հավաքումը և փոխադրումն առաջացնում է տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրապատիկի չափով:

6. Շինարարական աղբը համայնքի ղեկավարի սահմանած երթուղով չտեղափոխելը կամ սահմանված կարգով հատկացված վայրում այն չտեղադրելը՝ առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից հիսնապատիկի չափով, իսկ իրավաբանական անձի նկատմամբ՝ հիսնապատիկից ութսունապատիկի չափով:

7. Տրանսպորտային միջոցից աղբ նետելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի քսանհինգապատիկի չափով:

8. Հիսուն տոննա և ավելի սպառման թափոնների ժամանակավոր պահեստարանի կազմակերպումն ու շահագործումն առանց համապատասխան թույլտվության առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

9. Աղբավայրերի և թափոնների փոխաբեռնման կայանների կազմակերպումն ու շահագործումն առանց համապատասխան թույլտվության առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:

10. Սույն հոդվածի 3-ից 8-րդ մասերով սահմանված իրավախախտումները վարչական տույժ նշանակելու օրվանից հետո մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ տվյալ արարքի համար սույն հոդվածով նախատեսված տուգանքների չափերի կրկնապատիկի չափով:

11. Սույն հոդվածի 3-ից 8-րդ մասերով նախատեսված վարչական իրավախախտումները բնության հատուկ պահպանվող և/կամ մշակութային և բնության ժառանգության տարածքներում կատարելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ տվյալ արարքի համար սույն հոդվածով նախատեսված տուգանքների չափերի կրկնապատիկի չափով:

12. Եթե սույն հոդվածի 3-րդ մասում նշված դեպքերում վարչական իրավախախտում կատարած անձը լիազորված մարմնի (պաշտոնատար անձի) կողմից վարչական իրավախախտումը հայտնաբերելու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում վերացնում է վարչական իրավախախտման հատկանիշները, ապա նա ազատվում է նշանակված վարչական տույժը կատարելու պարտականությունից, եթե այդ մասին նույն ժամանակահատվածում լիազորված մարմնին (պաշտոնատար անձին) ներկայացնում է համապատասխան ապացույց (լուսանկար, տեսաերիզ համատեղ այցելություն համապատասխան վայր): Այդ մասին կազմվում է համապատասխան արձանագրություն, որի պատճենը տրվում է վարչական իրավախախտումը կատարած անձին:»:

**Հոդված 2.** Օրենսգրքի 81.2-րդ հոդվածի 1-ին մասից հանել «և շինարարական աղբի» և «կամ համայնքի ղեկավարի սահմանած երթուղով շինարարական աղբը չտեղափոխելը» բառակապակցությունները:

**Հոդված 3.** Օրենսգրքի 116-րդ հոդվածից հանել 3-րդ մասը:

**Հոդված 4.** Օրենսգրքի 124-րդ հոդվածի 15-րդ մասից հանել « ինչպես նաև տրանսպորտային միջոցի վարորդի կողմից տրանսպորտային միջոցից իրեր և առարկաներ նետելը» բառերը:

**Հոդված 5.** Օրենսգրքի 219.1-րդ հոդվածի՝

1. 1-ին մասում «43.1-րդ հոդվածի» բառերից հետո «1-ին, 2-րդ մասերով» բառերը փոխարինել «1-ին, 9-րդ մասերով» բառերով:

2. 2-րդ մասում «43.1-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ մասերով» բառերը փոխարինել «43.1-րդ հոդվածի 2-ից 8-րդ և 10-ից 12-րդ մասերով» բառերով:

**Հոդված 6.** Օրենսգրքի 224-րդ հոդվածի՝

1. 1-ին մասում «սույն օրենսգրքի» բառերից հետո լրացնել «43.1-րդ հոդվածի 7-րդ մասով,» բառերը:

2. 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերում «սույն օրենսգրքի» բառերից հետո լրացնել «43.1-րդ հոդվածի 7-րդ մասով,» բառերը:

**Հոդված 7.** Օրենսգրքի 239-րդ հոդվածի 1-ին մասում «սույն օրենսգրքի» բառերից հետո լրացնել «43.1-րդ հոդվածի 4-րդ մասով,» բառերը:

**Հոդված 8.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

ՎԱՐՉԱՎԱՆ ԻՐԱՎԱՆՍՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 43.1-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«Հոդված 43.1. Աղբահանության և սանիտարական մաքրման կանոնները խախտելը, չսահմանված վայրերում սպառման թափոններ թափելը**

1. Աղբահանության աշխատանքները ժամանակին չկազմակերպելը առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով.

~~4)2.~~ սույն հոդվածով նախատեսված խախտումը վարչական տույժ նշանակելու օրվանից հետո մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով.

**23.** Չսահմանված ու չնախատեսված տեղերում և վայրերում՝ աղբամուղերից, աղբահավաք խցերից, աղբարկղերից, աղբամաններից կամ աղբահավաք մեքենաներից, ինչպես նաև սահմանված կարգով կազմակերպված կամ նախատեսված փոխաբեռնման կայաններից ~~Թվայն~~ աղբավայրերից դուրս՝

1) մինչև մեկ խորանարդ մետր ծավալով սպառման աղբ թափելը՝ առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի քսանապատիկից երեսնապատիկի չափով, իսկ իրավաբանական անձի նկատմամբ՝ ութսունապատիկից հարյուրապատիկի չափով.

2) մեկ խորանարդ մետրից ավելի ծավալով սպառման աղբ թափելը՝ առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից ութսունապատիկի չափով, իսկ իրավաբանական անձի նկատմամբ՝ հարյուրհիսնապատիկից երկուհարյուրապատիկի չափով.

3) սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված արարքը կատարելը բնակելի, հասարակական կամ այլ նշանակության շենքերից կամ այլ շինություններից՝ առաջացնում է տուգանք ֆիզիկական անձի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից հիսնապատիկի չափով, իսկ իրավաբանական անձի նկատմամբ՝ հարյուրապատիկից հարյուրհիսնապատիկի չափով.

4) խոշոր եզրաչափի աղբ (երկու և ավելի քառակուսի մետր զբաղեցնող խոշոր կենցաղային և ոչ կենցաղային սարքավորումներ, այդ թվում՝ տրանսպորտային միջոցի հենասարք, թափք, մետաղական ջարդոն, էլեկտրատեխնիկական սարքավորումներ կամ այլ նմանատիպ իրեր) թափելը՝ առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից հարյուրհիսնապատիկի չափով, իսկ իրավաբանական անձի նկատմամբ՝ երկուհարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով.

5) մարտկոցներ, էլեկտրական կուտակիչներ, էլեկտրալամպեր, էլեկտրոնային ապրանքներ, գրաֆիտային էլեկտրոդներ թափելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի քսանապատիկից երեսնապատիկի չափով.

6) մինչև 5 հատ անվադող թափելը (բացառությամբ հեծանվի դողը), առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի քսանապատիկից երեսնապատիկի չափով.

7) 5-ից ավելի անվադող թափելը (բացառությամբ հեծանվի դողը)՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով.

8) մինչև մեկ խորանարդ մետր ծավալով շինարարական աղբ թափելը՝ առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի քսանապատիկից երեսնապատիկի չափով, իսկ իրավաբանական անձի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի վաթսուհարյուրապատիկից ութսունապատիկի չափով.

9) մեկից ավելի խորանարդ մետր ծավալով շինարարական աղբ թափելը՝ առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից ութսունապատիկի չափով, իսկ իրավաբանական անձի նկատմամբ՝ երկուհարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով.

10) կենսաբանական –թափոններ (կենդանական ծագման պարենային և ոչ պարենային հումքի վերամշակման արդյունքում ստացված թափոններ, ինչպես նաև անասնապահական, թռչնաբուծական և ձկնաբուծական ձեռնարկությունների գործունեության արդյունքում առաջացած թափոններ) թափելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի քսանապատիկից երեսնապատիկի չափով, իսկ իրավաբանական անձի նկատմամբ՝ հարյուրապատիկից երկուհարյուրապատիկի չափով:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված վարչական իրավախախտումները ջրային համակարգերում, այդ թվում ոռոգման ջրանցքներում, ինչպես նաև սանիտարական պահպանման գոտիներում կատարելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ տվյալ արարքի համար սույն հոդվածով նախատեսված տուգանքների չափերի կրկնապատիկի չափով:

5. Առանց թույլտվության շինարարական կամ խոշոր եզրաչափի աղբի հավաքումը և փոխադրումն առաջացնում է տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրապատիկի չափով:

46. Շինարարական աղբը համայնքի ղեկավարի սահմանած երթուղով չտեղափոխելը կամ սահմանված կարգով հատկացված վայրում այն չտեղադրելը՝ առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից հիսնապատիկի չափով, իսկ իրավաբանական անձի նկատմամբ՝ հիսնապատիկից ութսունապատիկի չափով:

57. Տրանսպորտային միջոցից աղբ նետելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի քսանհինգապատիկի չափով:

68. Հիսուն տոննա և ավելի սպառման թափոնների ժամանակավոր պահեստարանի կազմակերպումն ու շահագործումն առանց համապատասխան թույլտվության առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

79. Աղբավայրերի և թափոնների փոխաբեռնման կայանների կազմակերպումն ու շահագործումն առանց համապատասխան թույլտվության առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:

**810.** Սույն հոդվածի **23**-ից **78**-րդ մասերով սահմանված իրավախախտումները վարչական տույժ նշանակելու օրվանից հետո մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ տվյալ արարքի համար սույն հոդվածով նախատեսված տուգանքների չափերի կրկնապատիկի չափով:

**911.** Սույն հոդվածի **23**-ից **68**-րդ մասերով նախատեսված վարչական իրավախախտումները բնության հատուկ պահպանվող և/կամ մշակութային և բնության ժառանգության տարածքներում կատարելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ տվյալ արարքի համար սույն հոդվածով նախատեսված տուգանքների չափերի կրկնապատիկի չափով, ~~իսկ նշված վարչական իրավախախտումը կրկին անգամ կատարելը առաջացնում է տուգանքի նշանակում տվյալ արարքի համար սույն հոդվածով նախատեսված տուգանքների չափերի քառապատիկի չափով:~~

**4012.** Եթե սույն հոդվածի **23**-րդ ~~մասի 3-ից 6-րդ, 8-ից 10-րդ եւ 13-ից 15-րդ կետերում~~ նշված դեպքերում վարչական իրավախախտում կատարած անձը լիազորված մարմնի (պաշտոնատար անձի) կողմից վարչական իրավախախտումը հայտնաբերելու պահից **24 ժամվա մեկ աշխատանքային օրվա** ընթացքում վերացնում է վարչական իրավախախտման հատկանիշները, ապա նա ազատվում է նշանակված վարչական տույժը կատարելու պարտականությունից, եթե այդ մասին նույն ժամանակահատվածում լիազորված մարմնին (պաշտոնատար անձին) ներկայացնում է համապատասխան ապացույց: (լուսանկար, տեսաերկից համատեղ այցելություն համապատասխան վայր): Այդ մասին կազմվում է համապատասխան արձանագրություն, որի պատճենը տրվում է վարչական իրավախախտումը կատարած անձին:»:

**Հոդված 2.** Օրենսգրքի 81.2-րդ հոդվածի 1-ին մասից հանել «և շինարարական աղբի» և «կամ համայնքի ղեկավարի սահմանած երթուղով շինարարական աղբը չտեղափոխելը» բառակապակցությունները:

**Հոդված 3.** Օրենսգրքի 116-րդ հոդվածի 3-րդ մասից հոդվածից հանել «աղբ կամ այլ» բառերը 3-րդ մասը:

**Հոդված 4.** Օրենսգրքի 124-րդ հոդվածի 15-րդ մասից հանել « ինչպես նաև տրանսպորտային միջոցի վարորդի կողմից տրանսպորտային միջոցից իրեր և առարկաներ նետելը» բառերը:

**Հոդված 5.** Օրենսգրքի 219.1-րդ հոդվածի՝  
1. 1-ին մասում «43.1-րդ հոդվածի» բառերից հետո «1-ին, 2-րդ մասերով» բառերը փոխարինել «1-ին, **79**-րդ մասերով» բառերով:  
2. 2-րդ մասում «43.1-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ մասերով» բառերը փոխարինել «43.1-րդ հոդվածի **2-րդ, 3-րդ, 4-րդ, 6-րդ, 8-րդ և 10-ից 12-րդ** մասերով» բառերով:

**Հոդված 6.** Օրենսգրքի 224-րդ հոդվածի՝  
1. 1-ին մասում «սույն օրենսգրքի» բառերից հետո լրացնել «43.1-րդ հոդվածի **57**-րդ մասով,» բառերը:  
2. 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերում «սույն օրենսգրքի» բառերից հետո լրացնել «43.1-րդ հոդվածի **57**-րդ մասով,» բառերը:

**Հոդված 7.** Օրենսգրքի 239-րդ հոդվածի 1-ին մասում «սույն օրենսգրքի» բառերից հետո լրացնել «43.1-րդ հոդվածի 4-րդ մասով,» բառերը:

**Հոդված 8.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը ~~հաջորդող օրվանից:~~

**ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**

ՀՀ Ազգային ժողովի 2018 թվականի մարտի 21-ի նիստում առաջին ընթերցմամբ ընդունված «Թափոնների մասին» Հայաստանի  
 Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին»  
 Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ  
 Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության  
 օրենքների նախագծերի փաթեթի (Կ-248-31.01.2018, 19.03.2018-ՏՏԳԲ) վերաբերյալ ներկայացված առաջարկությունների

| Առաջարկության<br>(փոփոխության,<br>լրացման) հեղինակը | Հոդվածը, կետը, որին<br>վերաբերում է<br>առաջարկությունը  | Առաջարկություն (փոփոխություն, լրացում)   | Առաջարկության<br>վերաբերյալ հեղինակի<br>(հիմնական գեկուցողի)<br>եզրակացությունը | Առաջարկութ<br>յունը<br>ընդունելու<br>կամ<br>մերժելու<br>վերաբերյալ<br>հանձնաժողո<br>վի որոշումը |
|---|---|--|---|---|
| ՀՀ կառավարություն                                   | 1. «Թափոնների մասին»<br>Հայաստանի<br>Հանրապետության<br>օրենքում փոփոխություն<br>և լրացումներ<br>կատարելու մասին»<br>Հայաստանի<br>Հանրապետության<br>օրենքի նախագիծ<br>1) նախագծի<br>վերնագիր | 1.Նախագծի վերնագրից հանել<br>«ՓՈՓՈՒՆՈՒԹՅՈՒՆ» բառը՝ համաձայն<br>«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 40-րդ<br>հոդվածի 1-ին մասի պահանջների<br><br>2.Նախագծի 1-ին հոդվածի համարակալումը | Ընդունվել է, նախագծում<br>կատարվել է<br>համապատասխան<br>փոփոխություն:           |   |



|                   |   |  |  |  |
|-------------------|---|--|--|--|
|                   | 2) նախագծի 1-ին հոդված  | համապատասխանեցնել ՀՀ կառավարության 2012 թվականի ապրիլի 5-ի «Իրավական ակտերի նախագծերի մշակման մեթոդական ցուցումներին հավանություն տալու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի N 42 արձանագրային որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 13 արձանագրային որոշման 281-րդ կետի պահանջներին   | Ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: |  |
| ՀՀ կառավարություն | 2. «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ հոդված | Նախագծի 2-րդ հոդվածով ներկայացված օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված տնտեսական գործունեություն, աղբահանության վճարն ամբողջությամբ հաշվարկվում է առավել բարձր դրույքաչափով: «Առավել բարձր դրույքաչափ» ձևակերպումը հստակեցնելու նպատակով առաջարկում ենք «առավել բարձր դրույքաչափով» բառերը փոխարինել «տնտեսական գործունեության համար սահմանված առավել բարձր դրույքաչափով» բառերով | Ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: |  |
| ՀՀ կառավարություն | 3. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի  | Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 43.1-րդ հոդվածի. ա) համարակալումը ուղղել ` 1-ին մասի 1-ին կետը սահմանելով մասի տեսքով,   | Ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: |  |

|  |   |  |   |  |
|--|---|--|---|--|
|  | <p>Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի</p> <p>1) 1-ին հոդված</p> | <p>բ) 2-րդ մասում «ու» շաղկապը փոխարինել «կամ» շաղկապով՝ ելնելով այն հանգամանքից, որ առաջարկվող ձևակերպմամբ զանցակազմը առկա կլինի փոխաբերման կայաններում ու աղբավայրերում արարքը միաժամանակ կատարելու դեպքում,</p> <p>գ) 1-ին կետում «ֆիզիկական անձի» բառերից հետո լրացնել «նկատմամբ» բառը,</p> <p>դ) 3-րդ կետը «նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից հիսնապատիկի չափով» բառերից առաջ լրացնել «ֆիզիկական անձի նկատմամբ» բառերով,</p> <p>ե) 9-րդ մասից հանել «իսկ նշված վարչական իրավախախտումը կրկին անգամ կատարելը առաջացնում է տուգանքի նշանակում տվյալ արարքի համար սույն հոդվածով նախատեսված տուգանքների չափերի քառապատիկի չափով» բառերը,</p> <p>զ) 10-րդ մասում վերանայել կատարված հղումները, քանի որ նույն հոդվածի 2-րդ մասում առկա չեն 13-րդ և 15-րդ մասեր,</p> <p>է) նախագծի 1-ին հոդվածով միասնականացվում են առանձին տեսակի տրանսպորտային միջոցներից (տրանսպորտային միջոց, գնացք) աղբ կամ այլ առարկաներ նետելու զանցակազմերը: Նախագծի 6-րդ հոդվածով հիշյալ իրավախախտման համար վարույթ հարուցելու և</p> | <p>Ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:</p> |  |
|--|---|--|---|--|

|  |   |  |   |  |
|--|---|--|---|--|
|  | <p>2) 3-րդ հոդված</p> <p>3) 5-րդ և 6-րդ հոդվածներ</p> | <p>իրականացնելու իրավասությունը վերապահվում է ոստիկանությանը: Մինչդեռ, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 116-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված իրավախախտումը ոստիկանությանը վերապահված չէ: Առաջարկում ենք խմբագրել հոդվածը՝ վերոհիշյալ անհամապատասխանությունը վերացնելու նպատակով:</p> <p>Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 43.1-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մասով. «Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված վարչական իրավախախտումները ջրային համակարգերում, այդ թվում ոռոգման ջրանցքներում, ինչպես նաև սանիտարական պահպանման գոտիներում կատարելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ տվյալ արարքի համար սույն հոդվածով նախատեսված տուգանքների չափերի կրկնապատիկի չափով:</p> <p>Նախագծի 3-րդ հոդվածում գնացքների վազոնների պատուհաններից կամ դռներից աղբ կամ այլ առարկաներ դուրս նետելու զանցակազմից հանել «աղբ կամ այլ» բառերը, քանի որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 43.1-րդ և 116-րդ հոդվածներով նախատեսված զանցակազմերը</p> | <p>Ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:</p> |  |
|--|---|--|---|--|

|                                      |                                      |  |                                      |  |
|--------------------------------------|--------------------------------------|--|--------------------------------------|--|
|                                      |                                      | <p>կարող են խնդրահարույց լինել պրակտիկ կիրառման տեսանկյունից: Մասնավորապես, գնացքի վազոնի պատուհանից որևէ առարկա նետելու պարագայում վարչական մարմնի վրա ապացուցողական բեռ է դրվելու՝ արդյոք նետվածը պարզապես «առարկա» է, թե «աղբ», որպեսզի ըստ դրա լուծվի իրավախախտում կատարած անձի պատասխանատվության հարցը, հատկապես այն դեպքում, երբ երկու հողվածներով սահմանված արարքների համար նախատեսված տուգանքի չափը էապես տարբերվում է (հինգ հազար և քսանհինգ հազար դրամ): Այս կապակցության, առաջարկում ենք խմբագրել հողվածը:</p> <p>Նախագծի 5-րդ և 6-րդ հողվածների համարակալումը համապատասխանեցնել ՀՀ կառավարության 2012 թվականի ապրիլի 5-ի «Իրավական ակտերի նախագծերի մշակման մեթոդական ցուցումներին հավանություն տալու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի N 42 արձանագրային որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 13 արձանագրային որոշման 281-րդ կետի պահանջներին</p> |                                      |  |
| <p>ՀՀ Ազգային ժողովի «Ծառուկյան»</p> | <p>4. «Վարչական իրավախախտումների</p> | <p>Նախագծի 1-ին հողվածով նոր խմբագրությամբ շարադրվող 43.1-րդ հողվածի.</p>  | <p>ա) Առաջարկությունն իրացվել է:</p> |  |

|                      |   |  |   |  |
|----------------------|---|--|---|--|
| <p>խմբակցություն</p> | <p>վերաբերյալ<br/>Հայաստանի<br/>Հանրապետության<br/>օրենսգրքում<br/>փոփոխություններ և<br/>լրացումներ կատարելու<br/>մասին» ՀՀ օրենքի<br/>նախագծի 1-ին հոդված</p>  | <p>ա) 10-րդ մասում «24 ժամվա» բառերը<br/>փոխարինել «երեք աշխատանքային օրվա»<br/>բառերով</p> <p>բ) հոդվածում հստակեցնել<br/>«համապատասխան ապացույց»<br/>արտահայտությունը</p>  | <p>Նախագծում (նոր<br/>խմբագրությամբ 12-րդ<br/>մասում) «24 ժամվա»<br/>բառերը փոխարինվել են<br/>«մեկ աշխատանքային<br/>օրվա» բառերով:</p> <p>բ) Նախագծում<br/>«համապատասխան<br/>ապացույց» բառերից<br/>հետո լրացվել են<br/>(լուսանկար, տեսաերիզ<br/>համատեղ այցելություն<br/>համապատասխան վայր)<br/>բառերը:</p> |  |
|                      | <p>5. «Աղբահանության և<br/>սանիտարական<br/>մաքրման մասին»<br/>Հայաստանի<br/>Հանրապետության<br/>օրենքում փոփոխություն<br/>և լրացումներ<br/>կատարելու մասին»<br/>Հայաստանի<br/>Հանրապետության<br/>օրենքի նախագծի 14-րդ<br/>հոդված</p> | <p>Նախագծի 14-րդ հոդվածի 1-ին մասը<br/>շարադրել նոր խմբագրությամբ. «1. Բնակելի<br/>նպատակային նշանակության շենքերում և<br/>շինություններում կոշտ կենցաղային թափոնների<br/>համար աղբահանության վճարը սահմանվում է<br/>համայնքում անձնագրային հաշվառման<br/>կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և<br/>բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝<br/>ամսական հիսունից մինչև չորս հարյուր ՀՀ<br/>դրամ:»:</p> | <p>Չի ընդունվել:<br/>Նախագծով<br/>առաջարկվում է<br/>աղբահանության<br/>վարձավճարների<br/>գանձման համար որպես<br/>այլընտրանք<br/>հնարավորություն տալ<br/>կիրառելու նաև ըստ<br/>բնակելի շինության կամ<br/>բնակարանի ընդհանուր<br/>մակերեսի, քանի որ<br/>հնարավոր են դեպքեր,</p>                                |  |

|  |   |   |   |  |
|--|---|---|---|--|
|  |   |   | <p>երբ ավելի նպատակահարմար է կիրառել բնակ.մակերեսով հաշվարկները: Դրա հետ մեկտեղ, օրենքով առաջարկվում են տարբերակներ, որոնց կիրառումը ենթադրվում է երկկողմանի համաձայնության վրա:</p>  |  |
|  | <p>6. «Թափոնների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ պարբերությունից հանել «գոյացման կանխարգելման, դրանց» բառերը</p> | <p>Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ պարբերությունից հանել «գոյացման կանխարգելման, դրանց» բառերը</p> | <p>Չի ընդունվել:<br/>Հաշվի առնելով, որ օրենքի 4-րդ հոդվածով ամրագրվում են սահմանումները, ապա «թափոնների գործածություն» սահմանման մեջ ներառված են այն բոլոր գործողությունները, որոնք ուղղված են ընդհանրապես թափոնների հետ գործածությանը, այդ թվում թափոնների գոյացման կանխարգելմանը, դրանց հավաքմանը, փոխադրմանը և այլն:</p> |  |

